

Մ. Հ. Մխիթարյան

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՏԱԹՈՒՂՔ

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պատմական խոշոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում, որը մեծ ոգևորություն է առաջացնում ոչ միայն Ռուսաստանի, այլև աշխարհի տարբեր ծայրերում ցրված հայության մեջ:

Հայ ժողովրդի փրկության, նրա ազատության լուրն առանձին խանդավառությամբ է ընդունվում հնդկահայ գաղութում: Թե՛ Մադրասի, թե՛ Կալկաթայի հայերն շտապում են ողջունել իրենց հայրենակիցներին նրանց ազատության առիթով: Վաղուց արդեն հրապարակի վրա է հայ նշանավոր գրող, մանկավարժ և հրապարակախոս Մեսրոպ Թադիագյանի նամակը՝ ուղղված հայրենի նրևան քաղաքի բնակչությանը, իշխաններին և քահանաներին (Կալկաթա, 1/11—1828 թ.): ՀՍՍՌ Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարանի» արխիվում պահպանվող այդ հարցին նվիրված մի շարք փաստաթղթերի հետ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մադրասի հայ համայնքի նամակը, ուղղված Վրաստանի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսին (Մադրաս, 28/11/1828 թ.): Այդ նամակի հեղինակները հայտնում են, որ իրենք «անպատմելի ցնծությամբ», սրտի «ամենազվարճ հրճվանքով» և «հոգու խանդաղատական բերկրանքով» համբուրել են Ներսես Աշտարակեցու «ավետավոր ու ավետաբեր» նամակը, որը նրանց հաղորդում էր սիրելի հայրենիքի ազատագրության լուրը¹:

Սակայն հնդկահայերի ուղարկած թղթակցությունների մեջ առանձին կարևորություն է ներկայացնում մի այլ փաստաթուղթ, որի բնագիրը, դժբախտաբար, չկա մեր ձեռքի տակ: Այդ՝ Կալկաթայի հայերի ուղարկած նամակներն են լազարյաններին, որոնց մասին ժամանակին ընդարձակ հաղորդագրություն է տպագրվել «Московские ведомости» լրագրի «Զանազան լուրեր» բաժնում:

Ինչպես երևում է լրագրի տողատակի ծանոթությունից, հոդվածը կազմրվել է խաշատուր լազարյանի անմիջական մասնակցությամբ: Վերջինս Ներսես Աշտարակեցուն ուղղած իր 19/12—1829 թ. թվակիր նամակում նրա ուշադրությունը հրավիրելով «Московские ведомости» լրագրում տպագրված վերոհիշյալ հոդվածի վրա, միաժամանակ նշում է, որ ինքն է ավելացրել այն միտքը, թե հնդկահայերը Ռուսաստանում բնակվող հայերի բարեբախտության մասին իմացել են Ներսես արքեպիսկոպոսի միջոցով²: Հոդվածում նշվում է, որ Ներսես արքեպիսկոպոսի նամակների միջոցով Հնդկաստանում բնակվող հայերն իրազեկ են դարձել հայ ժողովրդի ազատագրման փաստին և այն խանդավառությանը, որով տոգորված են երախտագետ հայերը: Այնուհետև,

¹ ՀՍՍՌ Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ «Մատենադարանի» արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 38, վավ. 304:

² Նույն տեղում, լազարյանների արխիվ, թղթ. 108, գործ 14, վավ. 139:

խոսելով հնդկահայերի ոգևորության և նրանց դիտավորությունների մասին, հողվածագիրը գրում է. «Այս ըղձալի իրադարձության լուրը բոցավառեց Հնդկաստանի բոլոր, ինչպես և առանձին-առանձին հայերին, որոնք այրվում են համերաշխության և նվիրվածության զգացումներով՝ առ իրենց նոր թագավորը: Ընդ որում, նրանք հույսեր են տածում, առանձնապես ունևոր հայերը, իրենց ունեցվածքով և ընտանիքներով հանդերձ բնակություն հաստատելու Ռուսաստանի հայկական մարզում:

...Կալկաթայում և Հնդկաստանի այլ բնակավայրերում և քաղաքներում բարեգործական ընկերությունների կողմից հիմնադրված են տպարաններ և ուսումնարաններ: Այնտեղ դասավանդում են հայերեն, անգլերեն, բենգալերեն, լատիներեն և պարսկերեն լեզուներ, ինչպես և այլ գիտություններ: Ներկայումս, հայ ժողովրդի ցանկությամբ, Շվեդիայի դեսպանի միջոցով, Կալկաթայից հանձնարարական նամակներով և գրքերով առաջնակարգ հայերից ուղարկվել է մի գերազանց աշակերտ, Հովհաննիսյան ազգանունով, որը Մոսկվայի լազարյան ուսումնարանում ուսաց լեզու և գրականություն ուսանելով, կարողանա ժամանակին օգտակար լինել՝ Հնդկաստանում ուսաց լեզու դասավանդելու գործում: Այս պատանին, որ գիտե հայերեն, անգլերեն, բենգալերեն, պարսկերեն և մասամբ լատիներեն լեզուները, արդեն ժամանել է Մոսկվա և տեղավորված է Արևելյան լեզուների լազարյան ինստիտուտում:

Կալկաթայի հայ տպարաններում անգլերեն և հայերեն լեզուներով հրատարակվել են շատ գրքեր. նոր հրատարակվող գրքերում զետեղված են Ռուսաստանից հաղորդված հատուկ հոգվածներ, որոնց մեջ նշված է, որ հայ ժողովուրդը ուսական թագավորության մեջ վայելում է բարձրագույն հովանավորություն: Դրա հետ միասին հաղորդվում են զանազան մանրամասնություններ՝ հայերի Ռուսաստանում բնակություն հաստատելու, և նրանց աճի մասին, հայերի բարեկեցության ամրապնդման, Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի ժամանակներից, Պետրոս Մեծի և հետագա թագավորների կողմից հայ կաթողիկոսներին, թեմական առաջնորդներին և Ռուսաստանում բնակվող հայերին շնորհված հրովարտականքի մասին և այլն»:

Նամակի վերջում խոսվում է այն դժվարության մասին, որ ճանապարհի հեռավորության պատճառով ստեղծված է այդ երկու երկրների միջև կապ հաստատելու գործում: «Կալկաթայից հաճախակի հաղորդակցվել Ռուսաստանում ապրող անձանց հետ՝ շատ դժվար է. ճանապարհը Հնդկաստանից վտանգավոր է և տևական: Կալկաթայից Անգլիա, կամ Շվեդիա են մեկնում այս պետություններին պատկանող նավերով, ապա Լոնդոնից անմիջապես, կամ Ստոկհոլմի վրայով մեկնում են Ս. Պետերբուրգ: Նավարկությունը կախված է փոփոխական եղանակից և հաճախ ճանապարհորդությունը տևում է 6 կամ ավելի ամիսներ»:

Այս հողվածը ուշադրության արժանի է ոչ միայն այն առումով, որ մի անգամ ևս հաստատում է հնդկահայերի ունեցած անվերապահ ուսական օրինետացիան, այլև հրապարակում է հետաքրքրական մի փաստ՝ հնդկահայ գաղութի հայկական դպրոցներում ուսաց լեզվի դասավանդումը մտցնելու նրանց դիտավորությունը:

³ „Московские ведомости“, 1829, № 101.